Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ էջմիածին, 8 հոկտեմբերի, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Նմանո՛ղք ինձ եղերուք, որպէս եւ ես Քրիստոսի»
(Ա. Կորնթ. ԺԱ. 1):

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Ամենակալ Տիրոջ ողորմությամբ եւ բարեխնամ կամոք այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում՝ աղոթք վերառաքելով Ադրբեջանի ռազմական ոճրագործությունների եւ Արցախի հայաթափման պատճառով լրջագույն մարտահրավերների դիմագրավող մեր հայրենիքի ու ժողովրդի համար: Միասին աղոթական վկաները եղանք առաքելահաստատ Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսական ձեռնադրության մեծ խորհրդի եւ սրտագինս խնդրեցինք Սուրբ Հոգու շնորհների հեղումը նորաօծ եպիսկոպոսների վրա: Հայցեցինք սուրբ առաքյալների բարեխոսությունն առ Տերը, որ Ամենակալի պահպանությունն ու օրհնությունը հովանի լինեն ձեռնադրյալ Սրբազան Հայրերին, եւ միշտ անսասան ու պայծառ լինի մեր Սուրբ Եկեղեցին:

Բոլորիս հայցով ու աղոթքով եպիսկոպոսացյալ մեր եկեղեցականները երկնառաք շնորհներ ստացան՝ լինելու հոգեւոր տեսուչը հավատացյալների, Սուրբ Եկեղեցու ուղղափառ վարդապետության եւ սրբազան ավանդության պահպանողն ու փոխանցողը, նախանձախնդիր՝ մեր ժողովրդի աստվածասիրության ու հավատքի զորացման: Իր ծառայության մեջ եպիսկոպոսը կոչված է նմանվելու Քրիստոսին եւ իր վրա վերցնելու Տիրոջ քաղցր լուծը, իր հավատավոր կյանքով ու գործերով օրինակ լինելու հավատացյալներին: «Նմանվե՛ք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին»,— պատվիրում է Սուրբ Պողոս առաքյալը: Տիրոջը նմանվելու կոչումն ու

ձգտումը Եկեղեցու սպասավորների համար ակունք են զորության՝ մշտարթուն քաջ հովիվ լինելու, հավատացյալներին Քրիստոսով փրկության առաջնորդելու։ Այսպիսի հանձնառությամբ սպասավորության է հորդորում առաքյալը՝ ասելով. «Արածեցրե՛ք Աստծու այդ հոտը, որ ձեզ է հանձնված» (Ա. Պետ. Ե. 2)։

Մեր պատմության ընթացքում այս գիտակցությամբ զորացյալ եպիսկոպոսների քաջեռանդ առաջնորդությամբ հայրենիքում եւ սփյուռքի տարբեր համայնքներում ու վանքերում զորացել է հայոց հոգեւոր կյանքը, զարգացել մշակույթն ու դպրությունը, անխաթար պահպանվել ազգային ինքնությունը։ Մեր օրերում նույնպես՝ մեր Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը, իրեն հանձնված հոտի հանդեպ պատասխանատվությամբ, անհոգնաբեկ ջանքեր է գործադրում, որպեսզի մեր ժողովուրդը հավատարիմ մնա մեր հայրերի սուրբ հավատքին եւ իր կյանքը խարսխի քրիստոնեական արժեքների վրա։ Ներկայիս, երբ Արցախի հայաթափման հետեւանքով մեր ազգը գտնվում է լուրջ հիմնախնդիրների հանդիման, մեր Եկեղեցին՝ իր հոգեւոր դասով, կանգնած է լուրջ պատասխանատվության առջեւ՝ մարդասիրական օգնություն ցուցաբերելու Արցախից բռնի տեղահանվածներին եւ նրանց մխիթարելու իրենց ցավի ու նեղությունների մեջ։

Սիրելի՛ հավատավոր զավակներ, այսօր եպիսկոպոսության արժանացած մեր եկեղեցականներն իրենց գովելի սպասավորությամբ վաստակել են հավատավոր հայորդիների սերն ու հարգանքը։ Գոհունակությամբ ենք անդրադառնում նորաօծ Սրբազանների տարիների եկեղեցանվեր ու ազգասեր գնահատելի ծառայությանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից, թեմերից եւ համայնքներից Մեր բարեպաշտ հայորդիների բարի վկայություններին, ինչպես նաեւ փափագին՝ նրանց արժանացած տեսնելու եպիսկոպոսական բարձր ու պատասխանատու աստիճանին։ Ուրախությամբ ձեզ ենք ներկայացնում եպիսկոպոսացյալ մեր սիրելի հոգեւոր հայրերին։

Տ. Օշական եպիսկոպոս Գյուլգյուլյանը ավարտել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանը, այնուհետեւ հովվական ծառայությանը զուգահեռ իր ուսումնառությունը շարունակել Կանադայում, Շվեյցարիայում եւ Միացյալ Նահանգներում։ Երկարամյա հովվական ծառայությունից բացի, Սրբազան Հայրը նաեւ իր նպաստն է բերել Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանում՝ որպես տեսուչ։ Տ. Օշական եպիսկոպոսը, իր ծառա-

յության համար արժանանալով բարձր գնահատանքի, ընտրվել է Իրաքի Հայոց թեմի առաջնորդ։

Տ. Թեոդորոս եպիսկոպոս Զաքարյանը ավարտել է Երեւանի Ճարտարագիտական համալսարանը, այնուհետ ավարտել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ընծայարանը եւ ձեռնադրվել կուսակրոն քահանա։ Եղել է Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչը, վարդապետական աստիճան ստանալուց հետո ստանձնել Ժառանգավորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսչի պաշտոնը։ Վայելելով Սրբոց Հակոբյանց միաբանության անդամների եւ հավատացյալների վստահությունը՝ ընտրվել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության տարբեր հանձնախմբերում։ Ներկայիս Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Տնօրեն ժողովի ատենապետն է եւ Մարտիկյան թանգարանի տեսուչը։ Երուսաղեմի Հայոց Պատրիարքի օրհնությամբ եւ Տնօրեն ժողովի ընտրությամբ առաջադրվել է եպիսկոպոսության թեկնածու։

Տ. Մեսրոպ եպիսկոպոս Պարսամյանը ավարտել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցը, այնուհետեւ սովորել է Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ Ստրասբուրգի Մարկ Բլոկ պետական համալսարանում։ Իր ծառայությունն է բերել Մայր Աթոռում՝ որպես գավազանակիր, փոխդիվանապետ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ։ Հովվական առաքելությամբ պաշտոնավարել է Բելգիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի եւ Միացյալ Նահանգների հայ համայնքներում։ Արժանանալով թեմի հավատացելոց սիրուն եւ գնահատանքին՝ ընտրվել է ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ։

Տ. Կորյուն եպիսկոպոս Բաղդասարյանը ուսանել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ժառանգավորաց վարժարանում եւ Ընծայարանում, ձեռնադրվել կուսակրոն քահանա։ Ուսումը շարունակել է Երուսաղեմի Եբրայական համալսարանում, հետագա տարիներին ավարտել նաեւ մագիստրատուրայի կրթության կառավարում եւ Միջազգային հարաբերություններ բաժինները։ Դասավանդել է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ընծայարանում, ստանձնել պատասխանատու տարբեր պաշտոններ՝ Սրբոց Հակոբյանց տպարանի տեսուչ, Դիվանապետ, Միջեկեղեցական հարաբերությունների վարիչ։ Ներկայիս Տ. Կորյուն եպիսկոպոսը Պատրիարքության Կալվածոց տեսուչն է։ Երուսաղեմի Հայոց Պատրիարքի օրհնությամբ եւ Տնօրեն ժողովի ընտրությամբ առաջադրվել է եպիսկոպոսության թեկնածու։

Տ. Կիրակոս եպիսկոպոս Դավթյանը սովորել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, որն ավարտելուց հետո ծառայել է Մայր Աթոռի «Գարեգին Ա.» աստվածաբանական-հայագիտական կենտրոնում: Այնուհետ ծառայության է կոչվել Վիրահայոց թեմում՝ որպես Բաթումի քաղաքի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ, ապա Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմում՝ որպես Մելբուռնի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ: Ստանձնել է փոխառաջնորդի պարտականությունները Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում, Առաջնորդական տեղապահի պաշտոնը՝ Գեղարքունիքի թեմում: Ծառայել է Վիրահայոց թեմում որպես առաջնորդական տեղապահ, ապա ստանձնել Վիրահայոց թեմի առաջնորդի պաշտոնը:

Բարեպա՛շտ հավատավոր զավակներ Մեր, Սրբալույս մյուռոնով նորաօծ մեր Սրբազան Հայրերը Աստծու Սուրբ Խորանի առջեւ հայցեցին, որ Փրկիչ մեր Տերը զորացնի իրենց տերունապատվեր առաքելության մեջ, եւ ուխտեցին հավատարմորեն ու բոլորանվեր ջանքերով իրենց նվիրյալ ծառայությունը բերել Աստծուն, Եկեղեցուն ու ազգին՝ աստվածահաճո գործերով բարեզարդելու ազգային-եկեղեցական մեր անդաստանը: Սիրելի՛ Սրբազաններ, Մեր մաղթանքն ու աղոթքն է, որպեսզի ամրանաք Սուրբ Հոգու առատաբուխ շնորհներով, մեր երանելի Սուրբ Հայրերի նմանողությամբ պատրաստ լինեք վերցնելու ձեր խաչը եւ հետեւելու մեր Տիրոջը՝ միշտ հիշելով ավետարանական խոսքը. «Ում շատ է վստահված, նրանից ավելի շատ կպահանջեն» (Ղուկ. ԺԲ. 48): Մեր հորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահեք ձեր ուխտը, ծառայեք եւ գործեք մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի օրինակով, որպեսզի ձեր սպասավորությամբ Քրիստոսի սերը զորանա հայոց կյանքում, եւ միասիրտ ու միակամ լինի մեր ժողովուրդը: Մեր նախնյաց պես արթուն պահապանը եղեք հոգեւոր եւ ազգային մեր արժեքների ու սրբությունների, առաջնորդեք մեր ժողովրդին աստվածապատվեր շավիղներով, հայրենիքի լուսավոր ու ապահով գալիքը կերտելու տեսլականով: Հայրենյաց համար այս բարդ շրջանում, երբ մեր ժողովուրդը եւ պետությունը ծանր փորձությունների միջով են անցնում, շարունակեք ձեր բարի ջանքերը՝ մեր ժողովրդի զավակներին քաջալերելու եւ գոտեպնդելու, ազգի կարողություններն ու հնարավորությունները նպատակաուղղելու հայրենիքի հիմնախնդիրների հաղթահարմանը, սփոփելու եւ ըստ ամենայնի սատարելու բռնագաղթյալ արցախցի մեր քույրերին ու եղբայրներին: Այսպիսի

հանձնառությունների ու ծառայասիրության մեջ պիտի դրսեւորվեն առ Քրիստոս մեր հավատը եւ հայրենասիրությունը։

Աղոթքով առ Աստված՝ Տիրոջ մշտական աջակցությունը, կորով ու հարատեւ հաջողություններ ենք մաղթում ձեզ։ Հայցում ենք, որ ձեր ծառայության ճանապարհը զարդարեք բարի իրագործումներով՝ ի փառս Աստծո, ի սեր ազգի եւ մեր Սուրբ Եկեղեցու։ Թող Տերը միշտ անսասան պահի մեր Սուրբ Եկեղեցին եւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո խաղաղություն ու բարօրություն պարգեւի մեր հայրենիքին եւ համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին։

Տիրոջ շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն մեզ հետ եւ ամենքի այսօր եւ միշտ. ամեն։